

Պատմութիւնս ըսողանպօլու երէց յեղբօրէս երգեցանս.

Որոյ անունն յորջորջիւր Երեմիա չէլէպի Քէօ-միւրճեանս:

Բայց նալղենիս որ զրեցաւ՝ կրտսերէ յեղբօրէ նորայն.

Պիտակ կոմիտաս երէց՝ ստորադասն նոյնոյ Քէօ-միւրճեանս

Զմիջի թուականիս Հայոց՝ դու հաշուեաւ և լեր բաւական (ՌձԽՁ)

Զուարճացիր ի զբօսանս նազելի եղբայր պաւստականս:

Արդ Երեմիա չէլէպին էր որդի Տէր Մարտիրոսին ժականեաւոր Քէօմիւրճի օլլի, զօլլով 22 ամօք երէց քան զեղբայրն իւր կոմիտաս: Մեռեալ էր Երեմիա չէլէպին ի թուականին ՌձԽԳ, ի վաթսընամեայ հասակին:

«Դարձեալ նոյն Տէր կոմիտասն զբէքանի մի տուն ոտանաւորեալ բանս առ ոթն սիրելի և ծանօթ իւր և ի նոսին վկայէ վասն Երեմիայ չէլէպւոյն լինել իւր մեծ եղբայր, և են բանք նորին այս.

Իսկ նալղենիս լուր ինձ ով պարոն աղայ.

Ձի խնդալոյս խանդաղատել հարկեցայ,

Յորժամ ըզձեր զբօսնութիւն որ լուայ,

Զուենն ձեր ի Քէմէրներն բերկրեցայ:

Տենչայի յոյժ ի տեսանել միշտ ըզնա.

Քանզի զօվեն տեսօք զքաղցրութիւն նորա

Եւս առաւել երէց եղբայրն իմ Երեմիայ,

Ի պատմութիւնս ըստամպօլու զօվէ ըզնա:

«Եւ է Քէմերներն տեղի զբօսանաց հեռի ի քաղաքէն Ըստամպօլու իրր վեց ժամեան տարակալութեամբ, ուր են կամարքն ջրոյ աղբերացն սուլղան Սիւլէյման արքայի, զոր ընդ այն կամարան լեռնէ ի լեռան անցուցեալ է նոյն արքայ և բերել տուեալ է ի քաղաքն Ըստամպօլու »:

Ո. Կ.



ԺԱՄԱՆԱԿԱԲԱՆԱԿԱՆ

Ա.

Ը Ս Տ Կ Տ Ա Վ Ա Ր Ա Ն Ա Տ

Ինչպէս նախորդաց մէջ, նոյնպէս և ընթացիկ տարւոյս մեր Ազգային քանի մի Օրացոյցների մէջ տեսնում ենք, « Ի Ստեղծմանէ Աշխարհիս, 7351 (ամբ) » . « Ի Ջրհեղեղէն, 5089 (ամբ) » . Հետեւաբար Մարդոյ Ստեղծման թուականն լինում է 7351-1926 = 5425. Ն. Ք. և Ջրհեղեղին 5089-1926 = 3163, Ն. Ք. ուստի և Արարչագործութենէն մինչև ջրհեղեղ 5425-3163 = 2262 ամբ. Ս. քին թիւերն համապատասխանում են մեր Հին կտակարանի Ժամանակագրութեանց հետ: Սակայն, խորհելով որ (մեր Օրացոյցների յօրինողան բացառեալ) թերեւ լինին ոմանք հետաքրքիր՝ ի մասին վերլիշեալ թուականների կազմակերպութեանց, վստահացայ, ըստ չափու կարեաց իմոց, աստանօր համառօտիւ տալ նոցա բացատրութիւնն:

Հայ կտակարանի սքանչելի թարգմանութիւնն հիմեալ լինելով Եօթնասանից թարգմանութեանց՝ և ի նոցանէ ի կէր արկեալ ժամանակագրութեանց վերայ (որ տեղի ունեցաւ յԱղեքսանդրիա, յամին 273, Ն. Ք. հրամանաւ Պտղոմէոս ֆիլաղիզիոսի, ձեռամբ Եօթնասունն Յունազէտ Երբայեցի վարդապետաց), մեր Եկեղեցին ընդունած է Մարդոյ Ստեղծումն որպէս 5425. Ն. Ք. և Ջրհեղեղն որպէս 3163, Ն. Ք. Նոյնն ընդունած են նաև միւս Արեւելեան Եկեղեցիք (ոմանք խուն ինչ զանազանութեամբ): Սակայն Արևմտեանք, անդստին ի սկզբանէ, հետևողք եղած են Բուն Երբայայկան ժամանակագրութեանց, ընդունելով 4004. Ն. Ք. որպէս Ստեղծագործութեան թուականն:

Երկուսին ժամանակարանութեանց մէջ տարբերութիւնն է 1421 ամբ (5425-4004 = 1421), սպեռալ վեց ժամանակամիջների վերայ, Հետեալ Աղիւսակն

(Ա) ցուցանէ Առուշին ժամանակամիջոցի տարբերութիւնն, այսինքն՝ Արարչագործութենէն մինչև Զրհեղիւն, հիմն ունելով իրեն. Գլ. Ե, կամ «Գիր արարածոց մարդկան», ուր (նախ քան զԶրհեղիւն) տասնեքին նահապետաց ամաց հասակն, ըստ իւրաքանչիւրոյ, ի ծննդեան յաջորդ արուսերնդեանն յիշուած է. և իրեն. Գլ. Է. 11, ուր յիշատակուած է նոյի հասակն ի ժամանակի Զրհեղիւն:

որդւոյն Արփաքսադայ), զոր Բուն Երբա-յականն անտես առնէ:

Հետեւալ Աղիւսակն (Բ) ցուցանէ բաղ-դատութիւնն ի մէջ յիշեալ երկու ժամանակագրութեանց, առնչութեամբ վեցեքին ժամանակամիջոցացն՝ ամբողջովին:

Յաղագս պարզարանութեան, ոչ անտեղի վարկանիւմը յիշատակել աստանօր, որ Արարչագործութեան թուականն, ըստ Հրէից, այն է 4004, Ն. Ք, Բուն Երբա-

ԱՂԻՒՍԱԿ Ա.

Ամբ, ըստ
Եօթնամսնից

Ամբ, ըստ Բուն
Երբայականից.

Աղամ	230	տարեկան էր երբ ծնաւ	Սէթ	130
Սէթ	205	»	Ենօս	105
Ենօս	190	»	Կայնան	90
Կայնան	170	»	Մադաղիէլ	70
Մադաղիէլ	165	»	Յարեղ	65
Յարեղ	162	»	Ենօք	162
Ենօք	165	»	Մաթուսաղա	65
Մաթուսաղա	187	»	Ղամէք	187
Ղամէք	188	»	Նոյ	182
Նոյ	500	»	Սեմ	500
Նոյ էր 600 տարե-				
կան ի ժամանակի	100	»		100
Զրհեղիւն				

2,262

1,656

Երկրորդ ժամանակամիջոցն ընդգրկում է շրջանն ի մէջ Զրհեղիւն և չուելոյն Արահամու ի խառնէ առ յերկիրն Քանա-նու (Իրեն. ԺԲ. 4.), յորժամ Արահամ իւր եօթնասուն և հինգ ամաց հասակին մէջ էր. Այս ժամանակամիջոցի մէջ ևս տասն նահապետք էին, որոց տիոց համագումարն (ի ժամանակի յաջորդարար ծննդեան արու գաւակացն) է 427 ամբ, ըստ Բուն Երբայականին, և 1207 ամբ, ըստ Եօթնամսնից ժամանակագրութեանց (Իրեն. ԺԱ.), մինչդեռ վերջինքն (որպէս և, յետագայիւ, վկայեաց Ղուկաս Աւետարանչն. Գլ. Գ. 36) ներմուծեցին ի հաշիւ՝ երկրորդ մի Կայնան (զմկն Սեմայ

յական կոչեցինք, որովհետեւ, յընթաց հնգեասաներորդ դարուն (Թ. Ք.) Հրէից Ազգն կարծեցոյց զայն 244 ամօք, յայնմ հետէ որդեգրելով 3760 Ն. Ք, որպէս իւրեանց թուականն ի Ստեղծմանէ Աշխարհիս (4004-244 = 3760), որով և Հրէից այդ թուականն, այս տարի, լիւնում է 5686 (3760 + 1926 = 5686): Ըստ Երբայական վարդապետութեանց, Մեսիա, կամ Քրիստոս, զեռ չէ եկած, այնու թէ բազումք ի Մարգարէից նախասացին թէ վեց հազար աշխատակիր տաւրիք (համարեալ որպէս հաւասար վեցօրեայ Արարչագործութեանն, իւրաքանչիւր օր լինելով «Հազար ամ յաչս Տեառն».

(Սաղմոս, 88. 4.), պէտք է որ նախ ան- լոյս թուականն լինելով ամբ 7351 ի ցաննն Մարդոյ Ստեղծման թուականնն Ստեղծմանն աշխարհիս (5425 + 1926 = 7351), եթէ Հրէայն շարունակէին մի հազար տարի երանաւէտ երջանկու- պահպանել իւրեանց Բուն թուականն

ԱՂԻՒՍԱԿ Բ.

Ամբ, ըստ Ամբ, ըստ Բուն
Եօթամասից, Երբայականիմ.

ԱՌԱՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՅ	Արարչագործութենէն մինչև ջրհեղեղն (Տե՛ս Աղիւսակ Ա.)	2,262	1,656
ԵՐԿՐՈՐԴ	» Ջրհեղեղէն մինչև Կոչն առ Աբրա- համ (Երև. ԺԲ. 4.)	1,207	427
ԵՐՐՐՈՐԴ	» Ի չուելոյն Աբրահամու ի Խառանէ մինչև Խարայէլացւոց Ելքն Եգիպտոս- սէն (Երև. ԻԱ. 5, ԻԵ. 26, ԽԷ. 9, 28)	425	430
ՉՈՐՐՈՐԴ	» Ելելից Խարայէլացւոց մինչև Սողոմոն- այ Տաճարի Հիմնարկութիւնն — 1012, Ն. Ք. (Ա. Թագ. 2. 1.)	519	480
ՀԻՆԳԵՐՈՐԴ	» Ի Հիմնարկութենէն Սողոմոնայ Տա- ճարին մինչև Հրէից վերահաստա- տումն ձեռամբ Կիրոսի	475	475
ՎԵՑԵՐՈՐԴ	» Հրէից վերահաստատմանէն մինչև Երուսղ փրկչին մերոյ	<u>537</u> 5,425	<u>536</u> 4,004

Թիւն, երբ Մեսիա անձամբ պիտի թա-
գաւորէ ի վերայ Երկրի եւ Սատանայի
զօրութիւնն խորտակուի, որոյ ժամանա-
կիդ այդ ի լրման՝ վերայ պիտի հասանի
Յր Յասմե (Dies Irae), Այս է Հրէից
անդրդուելի դաւանանքն, ըստ Եօթանաս-
նից ժամանակարանութեանց, յիշատա-
կեալ վեց հազար տարի ժամանակն վեր-
ջացաւ բազմօր յառաջ, ընթացիկ տար-

(4004. Ն. Ք.), Մեսիային գալուստն պի-
տի հանդիպէր ներկայ դարուս վերջերումն,
այսինքն՝ Յամին Մարդեղութեան 1996
(4004 + 1996 = 6000), բայց իւրեանց
թուականն կարճեցուցանելով, իւրեանց
դաւանեալ այդ զէպքն յետաձգեցին մին-
ջև 2240. Յ. Ք. (3760 + 2240 =
6000). *Tempus omnia revelat.*

Լեւդոն

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

